ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Միասնական սոցիալական ծառայությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների կողմից մատուցվող ծառայությունների գնման նպատակով կազմակերպված ՄՍԾ ԳՀԾՁԲ-22/6 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021թ. դեկտեմբերի 14-ին կնքված N ՄՍԾ ԳՀԾՁԲ-22/6 պայմանագրում 2022 թվականի հունվարի 24-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ N 1** Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցելու համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

**Փոփոխության նկարագրություն N 1:** Կողմերը որոշեցին Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը:

**Փոփոխության հիմնավորում: N 1:** Գնումների մասին օրենսդրության և Պայմանագրի 7.5 և 7.13 կետերի համաձայն:

Պատվիրատու՝ ***Միասնական սոցիալական ծառայություն***

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**2021թ դեկտեմբերի 14-ին կնքված N ՄՍԾ ԳՀԾՁԲ-22/6 գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան «24» « 01 » 2022թ.

Միասնական սոցիալական ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Ա. Աղաբաբյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և Վահե Խաչատրյան Հայկի Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Վ. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 14.12.2021թ. կնքված N ՄՍԾ ԳՀԾՁԲ-22/6 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված 1-ի:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների կատարման Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Միասնական սոցիալական ծառայություն | Վահե Խաչատրյան Հայկի Ա/Ձ |
| Ք. Երևան, Նալբանդյան 13 | ք. Երևան, Նոր Նորք 1-ին զ/ծ Նանսենի փող. 18/1, հեռ. 093 693-709, 055 313-037 |
| ՀՎՀՀ 02505511 | ՀՎՀՀ 80588284 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011556355 | Հ/Հ 2050832124101001 |
| | Տնօրեն՝ Վ. Խաչատրյան |
| ------------------------------- (ստորագրություն) | ------------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 1
« 14» «դեկտեմբերի» 2021թ. կնքված
N ՄՍԾ ԳՀԾՁԲ-22/6 գնման պայմանագրի հիման վրա
«..24..» «____07____» 2022թ. կնքված համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ դրամ**

| *Ծառայության* | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *հրավերով նախատեսված չափաբաժնի համարը* | *գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)* | *անվանումը* | *դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | *հունվար* | *փետրվար* | *մարտ* | *ապրիլ* | *մայիս* | *հունիս* | *հուլիս* | *օգոստոս* | *սեպտեմբեր* | *հոկտեմբեր* | *նոյեմբեր* | *դեկտեմբեր* | *ԸՆԴԱՄԵՆԸ* |
| *1* | 50531200/504 | շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | 356,928 | 356,928 | 356,928 | 914,628 | 914,628 | 914,628 | 1,472,328 | 1,472,328 | 1,472,328 | 2230800 | 2230800 | 2230800 | 2230800 |

***Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Միասնական սոցիալական ծառայություն
Ք. Երևան, Նալբանդյան 13
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

---------------------------------------
*(ստորագրություն)*
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
Վահե Խաչատրյան Հայկի Ա/Ձ
ք. Երևան, Նոր Նորք 1-ին զ/ծ Նանսենի փող. 18/1,
հեռ. 093 693-709, 055 313-037
ՀՎՀՀ 80588284
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050832124101001
Տնօրեն՝ Վ.Խաչատրյան

---------------------------------------
*(ստորագրություն)*
Կ.Տ.